



Հարգելի ընթերցողներ!

Ձեզ ենք ներկայացնում Լրատվամիջոցների գերազանցության բալթյան կենտրոնի պատրաստած էլեկտրոնային տեղեկատու, որն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցներին: Այստեղ ամփոփել ենք դրամաշնորհային հայտարարություններ և Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի լրատվամիջոցների ֆինանսավորման հնարավորությունների մասին այլ նորություններ:

Մեր ցանկությունն է, որպեսզի տեղեկատուն ձեզ համար հասանելի դարձնի դոնորների ֆինանսավորումը, կրճատի տեղեկատվություն փնտրելու ձեր ժամանակը և ֆոնդահայթայթումը դարձնի առավել արդյունավետ: «Ֆինանսավորման նորություններ» բաժնում կարող եք ծանոթանալ դրամաշնորհային ամենաթարմ հայտարարություններին:

Կենտրոնը հուսով է, որ տեղեկատուն իր ներդրումը կունենա դոնորների ու Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցների միջև երկխոսության գործում և տարածաշրջանի մեդիա դաշտը կդարձնի առավել բազմազան:

Տեղեկատուի հետ կապված առաջարկներով, դիտարկումներով և տպավորություններով կարող եք կիսվել մեզ հետ՝ գրելով info@baltic.media հասցեով:

Հարգանքով,

Funds4Media տեղեկատուի հեղինակներ

1. Ռեդքլիֆ ինստիտուտի կրթաթոշակները լրագրողների համար
2. ՄԱԿ-ի մրցույթը լրագրողների համար
3. Մեդիա նախագծեր կոռուպցիայի հետ կապված բնակարանային խնդիրների լուծման համար
4. Հետաքննական լրագրության հիմնադրամի դրամաշնորհները
5. Climate Tracker-ի ճամփորդական դրամաշնորհը լրագրողների համար
6. Քուլման կենտրոնի կրթաթոշակները գրողների, լրագրողների և նկարիչների համար
7. Նիմանի ֆոնդի կրթաթոշակները հրատարակիչների, վեբ-դիզայներների, մեդիա վերլուծաբանների, դասախոսների և լրագրողների համար
8. Դրամաշնորհներ միջսահմանային հետաքննությունների համար
9. Մրցույթ տնտեսական լրագրողների համար
10. Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի կրթաթոշակային ծրագիրը
11. Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի Ռեյգան-Ֆասել կրթաթոշակները
12. Վիշեգրայան դրամաշնորհները
13. Դրամաշնորհներ ոչ-առևտրային կազմակերպությունների համար
14. Չիկագոյի համալսարանի Ստիգլերի կենտրոնի ծրագիրը և կրթաթոշակը լրագրողների համար
15. Դրամաշնորհներ նկարիչների և լրագրողների համատեղ ծրագրերի համար
16. Մեծ Բրիտանիայի կառավարության Chevening Scholarships-ը Մեծ Բրիտանիայի ԲՈՒՀ-երում սովորելու համար
17. Բորնմութի համալսարանի մեդիա դպրոցի մրցույթը

1. Ռեդքլիֆ ինստիտուտի կրթաթոշակները լրագրողների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Դիմել կարող են լրագրողները, ֆիլմեր, ծայն և նոր մեդիաներ ստեղծողները: **Հեռանկարային հետազոտությունների Ռեդքլիֆ ինստիտուտի** կրթաթոշակները մասնակիցներին հնարավորություն կընձեռեն աշխատելու տարբեր խնդիրների ուղղությամբ, որոնք առնչվում են բազմաթիվ մասնագիտությունների, գիտության և արվեստի ճյուղերի, ներառյալ լրագրությունը:

Կրթաթոշակի գումարը՝ մինչև 77,500 ԱՄՆ դոլար մեկ տարի ժամկետով, նաև հավելյալ գումար ծրագրի իրականացման ծախսերի համար: Կրթաթոշակ ստացողները 2020թ-ի սեպտեմբերից մինչև 2021թ-ի մայիսն ընկած ժամանակահատվածում կարող են օգտվել գրասենյակից ու ստուդիայից, ինչպես նաև Հարվարդի համալսարանի գրադարանից և այլ ռեսուրսներից:

Հայտերի գնահատման ընթացքում հաշվի կառնվի առաջարկված ծրագրի որակը և կարևորությունը, ինչպես նաև դիմորդի ձեռքբերումները և պոտենցյալը: Հետաքրքրված լրագրողները պետք է ունենան առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ:

Մանրամասները՝ <https://bit.ly/2IBYrFX>

Վերջնաժամկետ՝ 12 սեպտեմբերի, 2019թ.

2. ՄԱԿ-ի մրցույթը լրագրողների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Միացյալ ազգերի կազմակերպությանն առընթեր թղթակիցների ասոցիացիան ընդունում է հայտեր երեք անվանակարգերում՝ «Տպագիր և օնլայն հրապարակումներ», «Ռադիո և հեռուստատեսություն» և «Կլիմայի փոփոխություն»: Մրցույթին կարող են մասնակցել ՄԱԿ-ի և դրա գործակալությունների գործունեությունը լուսաբանող լրագրողներ: Նյութերը պետք է հրապարակված կամ հեռարձակված լինեն 2018թ-ի սեպտեմբերից մինչև 2019թ-ի օգոստոսն ընկած ժամանակահատվածում: Նյութերը կարելի է ներկայացնել ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից ցանկացածով: Այլ լեզուներով նյութերը պետք է թարգմանված լինեն անգլերեն կամ ֆրանսերեն: Մրցանակային ֆոնդը կազմում է մինչև 60 000 ԱՄՆ դոլար: Դեկտեմբերին Նյու Յորքում կայանալիք մրցանակաբաշխության արարողության ընթացքում մրցանակները կհանձնի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեսը:

Մանրամասները՝ <https://bit.ly/2u2vkE1>

Վերջնաժամկետ՝ 15 սեպտեմբերի, 2019թ.

3. Մեդիա նախագծեր կոռուպցիայի հետ կապված բնակարանային խնդիրների լուծման համար

Աշխարհագրություն՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան

New Media Advocacy Project (NMAP) հասարակական կազմակերպությունը հայտարարում է մրցույթ 10 ամիս տևողությամբ մենթորական ծրագրի համար: Ծրագրի մասնակից ակտիվիստները կմշակեն ու իրենց երկրներում կտարածեն մարդու իրավունքների պաշտպանության ուղղված մեդիա նախագծեր: Դրանք կարող են լինել ցանկացած ֆորմատով (կարճ վիդեո, վեբ-դոկ, ինտերակտիվ կամ մոլտիմեդիա նյութ, անիմացիա, քրաուդսորսինգային հարթակ, լուսանկար և այլն): Ծրագիրը կսկսվի մեկշաբաթյա ներածական հանդիպումով, որը տեղի կունենա 2019թ-ի նոյեմբերին: Այնուհետև մասնակիցները կրկին մեկ շաբաթով կհավաքվեն 2020թ-ի մարտին՝ քննարկելու նախագծերի նախնական տարբերակները, ներառյալ նկարահանված նյութերը և տարածման պլանները:

Մանրամասները՝ <https://bit.ly/2k6cryl>.

Վերջնաժամկետ՝ 22 սեպտեմբերի, 2019թ.

4. Հետաքննական լրագրության հիմնադրամի դրամաշնորհները

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Հետաքննական լրագրության հիմնադրամի տրամադրած դրամաշնորհների նպատակն է աջակցել կոռուպցիայի և պետական ու մասնավոր սեկտորներում պաշտոնեական դիրքի չարաշահման թեմաներով հետաքննական նախագծերին: Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 10 000 ԱՄՆ դոլար: Գումարը նախատեսված է ճանապարհածախսի, նյութեր հավաքելու և սարքավորում վարձակալելու համար:

Դիմել կարող են այն լրագրողները, որոնց հետաքննությունը առնչվում է ԱՄՆ-ին, ներառյալ Ամերիկայի քաղաքացիներին, կառավարությանը կամ մասնավոր ընկերություններին վերաբերող թեմաներին: Նյութերը պետք է հրապարակվեն անգլերենով: Դիմումները նույնպես հարկավոր է ներկայացնել անգլերենով՝ ներառյալ նախագծի մանրամասն բյուջեն:

Մանրամասները՝ <https://bit.ly/2oQZRUp>.

Վերջնաժամկետ՝ 23 սեպտեմբերի, 2019 թ.

5. Climate Tracker-ի ճամփորդական դրամաշնորհը լրագրողների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Մրցույթը նախատեսված է 18-ից 32 տարեկան լրագրողների համար: **Climate Tracker** կազմակերպությունը ընդունում է ճամփորդական դրամաշնորհների հայտեր ՄԱԿ-ի՝ կլիմայի փոփոխության բանակցությունները լուսաբանելու համար: Բանակցությունները կկայանան նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 14-ը Սանտյագոյում, Չիլի: Հարկավոր է ներկայացնել սեփական երկրում հանածո վառելիքի օգտագործման դադարեցման ծրագրերի մասին հրապարակված հոդվածներ, ֆոտո կամ վիդեո նյութեր: Ընդունվում են ցանկացած լեզվով նյութեր, որոնք հրապարակվել են համապետական լրատվամիջոցներում, Medium-ի նման հարթակներում կամ սոցիալական ցանցերում:

Մանրամասները՝ <https://bit.ly/2kzhkQM>

Վերջնաժամկետ՝ 27 սեպտեմբերի, 2019թ.

6. Քուլման կենտրոնի կրթաթոշակները գրողների, լրագրողների և նկարիչների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Մրցույթին կարող են դիմել լրագրողներ, գրողներ կամ այլոք, ովքեր գրում են գրքեր: **Նյու Յորքի հանրային գրադարանին կից գործող Քուլման կենտրոնը** 15 դրամաշնորհ կհատկացնի 9 ամիս տևողությամբ այս ծրագրի մասնակիցներին: Նրանք կաշխատեն իրենց ծրագրերի վրա, կմասնակցեն կենտրոնի կազմակերպած քննարկումներին և հանրային ֆորումներին:

Յուրաքանչյուր կրթաթոշակի չափը կլինի մինչև 70 000 ԱՄՆ դոլար, մասնակիցներին կտրամադրվի գրասենյակային տարածք, համակարգիչ և հասանելի կլինեն գրադարանի ռեսուրսները: Դիմել կարող են նաև գրքերի ստեղծման աշխատանքներում ներգրավված նկարիչներ և դիզայներներ:

Մանրամասները՝ <https://on.nypl.org/2gYGodV>

Վերջնաժամկետ՝ 27 սեպտեմբերի, 2019 թ.

7. Նիման ֆոնդի կրթաթոշակները հրատարակիչների, վեբ-դիզայներների, մեդիա վերլուծաբանների, դասախոսների և լրագրողների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Նիման ֆոնդը տրամադրում է դրամաշնորհներ՝ Հարվարդի համալսարանում կարճաժամկետ (մինչև 12 շաբաթ) հետազոտական նախագծեր իրականացնելու համար: Նախագծերի նպատակը պետք է լինի լրագրողների մասնագիտական զարգացումը: Նախագծերը կարող են առնչվել ծրագրավորմանը, դիզայնին, ֆինանսական ռազմավարությանը և այլն:

Կրթաթոշակառուների համար հասանելի կլինեն Հարվարդի համալսարանի ռեսուրսները, ներառյալ դասախոսների և ուսանողների հետ շփումը և գիտական կենտրոնների ու գրադարանների բովանդակությունը: Այն դեպքում եթե նախագծի իրականացման ընթացքում գործատուն աշխատավարձ չհատկացնի, կտրամադրվի շաբաթական 1 350 ԱՄՆ դոլարի կրթաթոշակ: Մասնակիցները կապահովվեն նաև կացարանով:

Մանրամասները՝ <https://bit.ly/2TGMc1s>

Վերջնաժամկետ՝ 27 սեպտեմբերի, 2019թ.

8. Դրամաշնորհներ միջսահմանային հետաքննությունների համար

Աշխարհագրություն՝ Եվրոպա, ներառյալ Արևելյան գործընկերության երկրները

Reporters in the Field-ը հայտարարում է մրցույթ տարբեր երկրների լրագրողների կողմից համատեղ հետաքննություններ իրականացնելու համար: Դրամաշնորհի չափը՝ մինչև 8 000 եվրո, որը յուրաքանչյուր թիմը կծախսի պատմություն գրելու, փորձագետներից տեղեկատվություն ստանալու և հետաքննությամբ զբաղվող մասնագետների համաեվրոպական ցանցում ընդգրկվելու համար:

Մանրամասները՝ <https://bit.ly/2M63ei1>

Վերջնաժամկետ՝ 29 սեպտեմբերի, 2019 թ.

9. Մրցույթ տնտեսական լրագրողների համար

Աշխարհագրություն՝ Հայաստան, Բելառուս

Զարգացման եվրասիական բանկը հայտարարում է մրցույթ «Եվրասիական ինտեգրումը և զարգացումը՝ 21-րդ դար» թեմայով: Մրցանակներ կշնորհվեն տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հարցերը լուսաբանող լավագույն նյութերի համար: Անվանակարգերը նախատեսված են լրատվական գործակալությունների, առցանց լրատվամիջոցների, տպագիր մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի և «Հոլմանիտար ինտեգրման թեմայով լավագույն նյութ»-ի համար: Նյութերը պետք է հրապարակված լինեն 2018թ-ի դեկտեմբերի 1-ից մինչև 2019թ-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հաղթողներին կշնորհվեն վկայականներ և արժեքավոր մրցանակներ:

Մանրամասները՝ <https://bit.ly/2kBBb1N>

Վերջնաժամկետ՝ 30 սեպտեմբերի, 2019թ.

10. Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի կրթաթոշակները

Աշխարհագրություն՝ Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա

Կարող են դիմել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների այն բնակիչները, ովքեր զբաղվում են քաղաքացիական հասարակության խնդիրներով, հետազոտությամբ, մարդու իրավունքների պաշտպանությամբ, լրագրությամբ, քաղաքներին բնորոշ, բնապահպանական և սոցիալական հարցերով:

Թեկնածուները պետք է ունենան հիմնավոր և փաստաթղթերով ապացուցված աշխատանքային փորձ քաղաքացիական հասարակության սեկտորում և լրագրության մեջ: Այդ փորձը նրանց թույլ կտա հաջողությամբ իրականացնել եռամսյա ծրագիրը:

Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնը կհոգա ճանապարհածախսը և վիզայի ու կեցության հետ կապված ծախսերը: Կրթաթոշակառուներին կտրամադրվի նաև գրասենյակային տարածք, ինտերնետ կապ և հանդիպումների սենյակ:

Մանրամասները՝ <https://bit.ly/2llvq2E>

Վերջնաժամկետ՝ 30 սեպտեմբերի, 2019 թ.

11. Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի Ռեյգան-Ֆասել կրթաթոշակները

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

National Endowment for Democracy-ի (NED) հիմնադիրներ՝ նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանի և հանգուցյալ կոնգրեսմեն Դանթ Ֆասելի անվան կրթաթոշակները նախատեսված են լրագրողների, ակտիվիստների, քաղաքացիական հասարակության առաջնորդների և գիտնականների փորձի փոխանակման համար: Հաղթողները հինգ ամիս կանցկացնեն Վաշինգտոնում գտնվող NED-ի գրասենյակում որոշակի երկրի կամ տարածաշրջանի ժողովրդավարությանը առնչվող հետազոտություն իրականացնելու համար: Կրթաթոշակները կտրամադրվեն արտերկրում ժողովրդավարության զարգացման համար ռազմավարություններ մշակելու և հեղինակային հետազոտություններ անցկացնելու համար:

Մանրամասները՝ <https://bit.ly/2LHsChd>

Վերջնաժամկետ՝ 1 հոկտեմբերի, 2019 թ.

12. Վիշեգրադյան դրամաշնորհները

Աշխարհագրություն՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա

Վիշեգրադյան ֆոնդը աջակցում է Վիշեգրադի տարածաշրջանում գործող ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների, պետական հաստատությունների և քաղաքապետարանների, մասնավոր ընկերությունների և ոչ-առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև կրթական և հետազոտական կենտրոնների միջև համագործակցությանը:

Ծրագրերում պետք է ընդգրկված լինեն V4-ի առնվազն 3 երկրների կազմակերպություններ: Ծրագրերի առավելագույն տևողությունը պետք է լինի 18 ամիս:

Մանրամասները՝ <https://bit.ly/2vKnL63>

Վերջնաժամկետ՝ 1 հոկտեմբերի, 2019թ.

13. Դրամաշնորհներ ոչ-առևտրային կազմակերպությունների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Ամեն տարի **Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամը** (NED) ֆինանսական աջակցություն է տրամադրում հարյուրավոր ոչ-առևտրային կազմակերպությունների, որոնք ունեն ժողովրդավարական նպատակներ և նպաստում են ժողովրդավարական ինստիտուտների կայացմանը:

Դրամաշնորհի չափը կախված է ծրագրի ծավալից, սակայն միջին գումարը կազմում է 50 000 ԱՄՆ դոլար և տրամադրվում է 12 ամիս տևողությամբ ծրագիր իրականացնելու համար:

NED-ն աջակցում է միայն ոչ-կառավարական կազմակերպություններին, որոնց թվում կարող են լինել քաղաքացիական կազմակերպություններ, ասոցիացիաներ, անկախ լրատվամիջոցներ և նման կառույցներ:

NED-ն ընդունում է առաջարկներ տեղական անկախ կազմակերպություններից, որոնց ծրագրերի նպատակն է՝

- մարդու իրավունքների պաշտպանությունը,
- տեղեկատվության ազատությունը և անկախ լրատվամիջոցների զարգացումը,
- ժողովրդավարական կառույցների և արժեքների կայացումը,
- հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը,
- քաղաքացիական կազմակերպությունների զարգացումը,
- ժողովրդավարական քաղաքական գործընթացների ու ինստիտուտների կայացումը,
- քաղաքացիական գրագիտության խթանումը,
- ժողովրդավարական հակամարտությունների լուծումը,
- ասոցիացիաների ազատությունը,
- գլոբալ շուկայական տնտեսության զարգացումը:

Մանրամասները՝ <https://bit.ly/2xlgRTe>

Վերջնաժամկետ՝ 4 հոկտեմբերի, 2019թ.

14. Չիկագոյի համալսարանի Ստիգլերի կենտրոնի ծրագիրը և կրթաթոշակը լրագրողների համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Չիկագոյի համալսարանին կից գործող Տնտեսության և պետականության Ստիգլերի կենտրոնը 2020թ-ի մարտի 23-ից մինչև հունիսի 13-ը Չիկագոյում կիրականացնի նոր սերնդի տնտեսական լրագրողների համար նախատեսված ծրագիր: Հաղթողները կմասնակցեն դասընթացների ու միջոցառումների և կհամագործակցեն գործընկերների հետ:

Կազմակերպիչները կհոգան ճանապարհածախսը, դասընթացների հետ կապված ծախսերը, կտրամադրեն աշխատանքային սեղան, հնարավորություն նյութերը հրապարակելու ProMarket բլոգում և կշնորհեն 12 000 ԱՄՆ դոլարի չափով կրթաթոշակ:

Մանրամասները՝ <https://bit.ly/2gb9wPU>

Վերջնաժամկետ՝ 20 հոկտեմբերի, 2019թ.

15. Դրամաշնորհներ լրագրողների և նկարիչների համատեղ ծրագրերի համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Eyebeam Center for the Future of Journalism-ը **Craig Newmark Philanthropies**-ի աջակցությամբ տրամադրում է դրամաշնորհներ 500-ից մինչև 5 000 ԱՄՆ դոլարի սահմաններում՝ լրագրողների ու նկարիչների կողմից լրագրողական համատեղ ծրագրերի իրականացման համար: Այս երկարաժամկետ ծրագրերը պետք է լինեն նորարարական ու հետաքննական և ներառեն տեքստեր, լուսանկարներ, աուդիո և վիդեո: Հնարավոր թեմաներն են՝ տվյալների գատնիությունը, 2018 և 2020թթ-ի ընտրությունները, հասարակության մեջ տեխնոլոգիաների դերը, քաղաքական ազդեցության մեծացմանն ուղղված արշավները, ապատեղեկատվության դեմ պայքարը, արհեստական բանականությունը: Հայտերը հարկավոր է ներկայացնել անգլերեն լեզվով:

Մանրամասները՝ <https://bit.ly/2GU68Gz>



16. Մեծ Բրիտանիայի կառավարության Chevening Scholarships ծրագիրը Մեծ Բրիտանիայի ԲՈՒՀ-երում սովորելու համար

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Ծրագրին կարող են դիմել նաև լրագրողները:

Մեծ Բրիտանիայի կառավարության Chevening Scholarships ծրագիրը ֆինանսավորում են Արտաքին գործերի նախարարությունը (<https://www.gov.uk/government/organisations/foreign-commonwealth-office>) և գործընկեր կազմակերպությունները:

Ամբողջական կամ մասնակի կրթաթոշակներ են տրամադրվում Մեծ Բրիտանիայի ցանկացած համալսարանում ցանկացած մասնագիտությամբ մագիստրոսի կոչման ուսումնական ծրագրի համար (սովորաբար մեկ տարի ժամկետով): Դիմորդները պետք է բակալավրի ուսուցման ընթացքում սովորած լինեն բարձր գնահատականներով և ունենան երկուսից հինգ տարվա մասնագիտական փորձ: Անգլերենի գերազանց իմացությունը պարտադիր է:

Մանրամասները՝ <https://bit.ly/2m6pmkB>

Վերջնաժամկետ՝ 5 նոյեմբերի, 2019թ.

17. Բորնմուլթի համալսարանի մեդիա դպրոցի մրցույթը

Աշխարհագրություն՝ ամբողջ աշխարհ

Մրցույթին կարող են մասնակցել ուսանողները, բլոգերները և գրողները իրենց նորարարական աշխատանքներով:

Բորնմուլթի համալսարանի մեդիա դպրոցը ընդունում է հայտեր New Media Writing Prize (NMWP) մրցույթի համար:

Ընդունվում են նորարարական և ինտերակտիվ սթորիթելինգի ժանրի նյութեր (ինչպես գեղարվեստական, այնպես էլ վավերագրական), որոնք գրվել են հատուկ համակարգիչներով ու բջջային սարքերով կարդալու/դիտելու համար: Այդ նյութերը կարող են լինել պատմվածքներ, վեպեր, վավերագրական ստեղծագործություններ կամ բանաստեղծություններ, որոնցում օգտագործվել է տեքստ, պատկեր, վիդեո կամ անիմացիա պարունակող ինտերակտիվ մոտեցում:

Մրցույթի հիմնական հաղթողը կստանա 1 000 բրիտանական ֆունտ: Ուսանողական անվանակարգում հաղթողը կստանա 750 ֆունտ Unicorn Training-ի կողմից: Կշնորհվեն նաև Gorkana Journalism Award մրցանակը՝ 750 ֆունտ և Genarrator հարթակի մրցանակը նորարարության համար՝ 500 ֆունտ:

Մանրամասները՝ <https://bit.ly/1Vax4Oy>

Վերջնաժամկետ՝ 22 նոյեմբերի, 2019թ. (ուսանողական անվանակարգի համար՝ 13 դեկտեմբերի, 2019թ.):

© Մեդիա գերազանցության բալթյան կենտրոն, 2019թ.

Տեղեկագիրը պատրաստվել է անվճար տարածելու համար:

Պատրաստել են՝ Ալինա Ռուդինյան, Արշալույս Մուրադյանը, Դիանա Խոդուկինյան, Եվգենիա Օլիյնիկը, Կատրինա Տետերե-Ֆրոլովան, Մարտինա Մուրնիեկսը, Նաիլիա Ալիևան, Թամար Խորբալաձեն, Վիկտոր Գոտիսան:

Հայերեն թարգմանությունը՝ Արշալույս Մուրադյան:

Մեդիա գերազանցության բալթյան կենտրոնը պատասխանատվություն չի կրում թարգմանության ճշգրտության համար: Դոնորների և դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվությունը սպառիչ չէ. տեղեկագիրը պատրաստողները իրավունք են վերապահել ընտրել առավել նշանակալից հնարավորությունները: Կենտրոնը խորհուրդ է տալիս դիմումները պատրաստելիս, դոնորների հետ հաղորդակցվելիս և տեղեկագրում ներկայացված նյութերը օգտագործելիս առաջնորդվել միայն սկզբնական/առաջնային աղբյուրներով:

Տեղեկագրում օգտագործվել են նյութեր հետևյալ աղբյուրներից.

- radcliffe.harvard.edu
- unca.com
- freedomhouse.org
- thetilt.org
- fij.org
- act.climatetracker.org
- nypf.org
- nieman.harvard.edu
- eabr.org
- praguecivilsociety.org
- ned.org
- visegradfund.org
- research.chicagobooth.edu
- eyebeam.org
- chevening.org
- newmediawritingprize.co.uk